

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1) Նկարում մթնոլորտի ո՞ր շերտն է նշված *Ա* տառով.

- 1) արտաքին ոլորտը
- 2) ջերմոլորտը
- 3) ներքնոլորտը
- 4) վերնոլորտը



2) Միջին մասշտաբի քարտեզներ են.

- 1) 1 : 1 000 000 — 1 : 5 000 000
- 2) 1 : 5 000 000 — 1 : 10 000 000
- 3) 1 : 10 000 — 1 : 200 000
- 4) 1 : 200 000 — 1 : 1 000 000

3) Հասարակածի վրա տեղակայված երկու քաղաքների հեռավորությունը 4000 կմ է, իսկ քարտեզում՝ 20 սմ: Քարտեզի մասշտաբը կլինի.

- 1) 1 : 60 000 000
- 2) 1 : 80 000 000
- 3) 1 : 20 000 000
- 4) 1 : 40 000 000

4) Երկրի՝ իր առանցքի շուրջը պտույտի հետևանք չէ.

- 1) շարժվող մարմինների հետագծի շեղումը իր սկզբնական ուղղությունից
- 2) ժամային գոտիների առանձնացումը
- 3) գիշեր-ցերեկ հերթափոխությունը
- 4) տարվա եղանակների առաջացումը

5


Երկրի մակերևույթում այն տեղը, որը երկրաշարժի օջախի վերևում է և նրան ամենամոտն է, կոչվում է.

- 1) սեյսմոգրաֆ
- 2) ցունամի
- 3) հիպոկենտրոն
- 4) էպիկենտրոն

6

Ըստ նկարի՝ տարվա  $n^{\circ}$  ր եղանակն է հարավային կիսագնդում.

- 1) աշուն
- 2) ձմեռ
- 3) գարուն
- 4) ամառ



7

Բնութագրումով որոշել լեռների հասակը.

*Այդ հասակի լեռները սովորաբար բարձր են, կատարները՝ սրածայր, լանջերը՝ զառիթափ: Բնչ հասակի լեռներ են.*

- 1) միջին
- 2) հնագույն
- 3) երիտասարդ
- 4) հին

8


Երևան քաղաքում հունվարի 10–ին գրանցվել են օդի հետևյալ ջերմաստիճանները՝  $-5^{\circ}$ ,  $-9^{\circ}$ ,  $-6^{\circ}$ ,  $-4^{\circ}$ ,  $+3^{\circ}$ ,  $+5^{\circ}$ ,  $+2^{\circ}$ ,  $-2^{\circ}$ : Օդի միջին օրական ջերմաստիճանը կլինի.

- 1)  $-2^{\circ}$
- 2)  $-4^{\circ}$
- 3)  $2^{\circ}$
- 4)  $3^{\circ}$

9


Նկարում կետի  $n^{\circ}$  ր բարձրությունն է նշված  $F$  տառով.

- 1) առավելագույն
- 2) միջին
- 3) հարաբերական
- 4) բացարձակ



10 Նկարում Ա տառով նշված է գետի.

- 1) ջրհավաք ավազանը
- 2) ջրբաժան գիծը
- 3) հունը
- 4) ողողատը



11 «Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Օրինոկոն — ձմեռ
- 2) Ջամբեզի — ամառ
- 3) Եփրատ — ձմեռ
- 4) Հուանհե — գարուն

12 Ո՞ր բնական զոնային են առավել բնորոշ սառցադաշտերի ներգործությամբ ստեղծված ռելիեֆի ձևերը.

- 1) արկտիկական անապատների
- 2) բարեխառն գոտու տափաստանների և անտառատափաստանների
- 3) սավաննաների և նոսր անտառների
- 4) անապատների և կիսաանապատների

13 Բնութագրումով որոշել նեղուցը.

*Այդ նեղուցը միացնում է երկու օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է.*

- 1) Թորեսի
- 2) Մագելանի
- 3) Բերինգի
- 4) Կուկի

14 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անցումային կլիմայական գոտիները այդպես են կոչվում այն պատճառով, քանի որ դրանք անցնում են տաք և ցուրտ կլիմաների միջև:
- 2) Անցումային կլիմայական գոտիները ևս ունեն իրենց բնորոշ օդային զանգվածները:
- 3) Տարվա տարբեր սեզոններին անցումային կլիմայական գոտիներ են թափանցում տարբեր տիպի օդային զանգվածներ:
- 4) Անցումային կլիմայական գոտիներում օդի ջերմաստիճանի, տեղումների քանակի և գերիշխող քամիների սեզոնային փոփոխություններ չկան:

15

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:
- 2) Յուրաքանչյուր ժամային գոտու համար գոտիական ժամանակ է ընդունվում նրա կենտրոնով անցնող միջօրեականի տեղական ժամանակը:
- 3) Յուրաքանչյուր ժամային գոտի ընդգրկում է 30°:
- 4) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:

16

**Բոսֆորի նեղուցով ո՞ր ծովերն են միանում.**

- 1) Եգեյան և Մարմարա
- 2) Սև և Մարմարա
- 3) Ադրիատիկ և Հոնիական
- 4) Ազովի և Սև

17

**Աֆրիկայի մերձհասարակածային գոտու գետերը հորդանում են.**

- 1) յուրաքանչյուր կիսագնդի ձևում
- 2) ողջ տարվա ընթացքում
- 3) յուրաքանչյուր կիսագնդի գարնանը
- 4) յուրաքանչյուր կիսագնդի ամռանը

18


**Ի՞նչ ծագում ունի Մեծ արգելախութը.**

- 1) տեկտոնահրաբխային
- 2) կորալային
- 3) մայրցամաքային
- 4) հրաբխային

19

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Կանարյան
- 2) Սոմալիական
- 3) Մոզամբիկի
- 4) Բենգելյան



20

Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Է տառով.

- 1) Կամերուն
- 2) Գաբոն
- 3) Չադ
- 4) Նիգեր

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության թվի կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:
- 2) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է երկրի բնակլիմայական պայմաններով:
- 3) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:
- 4) «ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:

22

Ցեղակից լեզուների ամբողջությունը, որն իրենից ներկայացնում է լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմնական, ամենախոշոր միավորը, կոչվում է.

- 1) ժողովուրդ
- 2) էթնոս
- 3) լեզվաընտանիք
- 4) լեզվախումբ

23

Բնութագրումով որոշել պետությունը.

*Հարավարևմտյան Ասիայի այս պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աձեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Ադրբեջանը
- 2) Իրանը
- 3) Վրաստանը
- 4) Ուկրաինան

24

2005 թ. ՀՀ է ժամանել 10441 մարդ, մեկնել՝ 18135 մարդ: Միգրացիայի ծավալը հավասար կլինի.

- 1) 8135 մարդ
- 2) 8576 մարդ
- 3) 28576 մարդ
- 4) 7694 մարդ

25

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Կեղծ ուրբանիզացումը բնորոշ է զարգացող երկրներին:
- 2) Խմբային գյուղական տարաբնակեցումը բնորոշ է Կանադային և Ավստրալիային:
- 3) Ջարգացած երկրներում ցածր է ուրբանիզացման մակարդակը:
- 4) Ջարգացող երկրներում ցածր են ուրբանիզացման տեմպերը:

26

Միջերկրական ծով ելք ունեցող պետություն է.

- 1) Հորդանանը
- 2) Սաուդյան Արաբիան
- 3) Լիբանանը
- 4) Իրաքը

27 Ո՞ր երևույթն է կոչվում է «քիմիական արտադրության արտահանում».

- 1) քիմիական արդյունաբերության որոշ ճյուղերի և արտադրությունների արդյունաբերության այլ ճյուղերի հետ համատեղ միջճյուղային համալիրների ստեղծումը
- 2) քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանումը
- 3) քիմիական արտադրանքը արդյունաբերության այլ ճյուղերում օգտագործելը
- 4) զարգացած երկրների քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները զարգացող երկրներում տեղաբաշխելը

28 Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.


- 1) Երկրում շատ բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 2) Աչքի է ընկնում բնակչության բնական աճի բարձր ցուցանիշով:
- 3) Երկրի բնակչության մեծամասնությունը դավանում է հնդուականություն:
- 4) Բնակչության թվով աշխարհի երկրորդ պետությունն է:

29 Բնակչությունը խիստ անհավասարաչափ է տեղաբաշխված.

- 1) Լատվիայում և Լիտվայում
- 2) Ուկրաինայում և Մոլդովայում
- 3) Բելգիայում և Դանիայում
- 4) Չինաստանում և Կանադայում

30 Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում 1 թիվը.

- 1) 1000–2000 մ
- 2) մինչև 200 մ
- 3) 200–500 մ
- 4) 500–1000 մ






31

Քարտեզում ո՞ր տառով են նշված բնակչության առավել բարձր ծնելիության ցուցանիշ ունեցող երկրները.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



32

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար երկաթի հանքաքարի պաշարներով.

- 1) Ավստրալիա, Ռուսաստան, Բրազիլիա
- 2) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա
- 3) Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա
- 4) Չինաստան, Ուկրաինա, Թուրքիա

33

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Կուրի և Արաքսի ջրհավաք ավազանների միջև ջրբաժան գիծը ՀՀ գլխավոր կլիմայաբաժանն է:
- 2) ՀՀ Արաքսի ավազանին պատկանող գետերը բացառապես սնվում են ձնաանձրևային ջրերով:
- 3) ՀՀ բոլոր գետերը պատկանում են Կասպից ծովի ներքին հոսքի ավազանին:
- 4) Կուրի և Արաքսի միջև ջրբաժան գիծն անցնում է Ջավախքի, Փամբակի, Արեգունու և Սևանի լեռների կատարամերձ տեղամասերով:

34

Գեղարքունիքի մարզում երկաթուղային կայարան ունեն.


- 1) Սոթքը և Սևանը
- 2) Ճամբարակը և Մարտունին
- 3) Մարտունին և Գավառը
- 4) Վարդենիսը և Վարդենիկը

35 Ո՞ր գետը Արագածոտնի մարզի տարածքով չի հոսում.

- 1) Ամբերդ
- 2) Քասաղ
- 3) Մեծամոր
- 4) Գեղարոտ

36 Ո՞ր գետն է քարտեզում նշված Գ տառով.

- 1) Հագարու
- 2) Որոտան
- 3) Ողջի
- 4) Մեղրիգետ



37 Ո՞ր ջրեկն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Սևանի
- 2) Արգելի
- 3) Հրազդանի (Աթարբեկյան)
- 4) Քանաքեռի

38 Անտառային ռեսուրսներով աղքատ երկրներ են.

- 1) Մալայզիան և Կոլումբիան
- 2) Ավստրալիան և Եգիպտոսը
- 3) Կանադան և Ֆինլանդիան
- 4) Բրազիլիան և Ինդոնեզիան

39

**Տրվածներից ո՞րը պետք է առաջնահերթ հաշվի առնել բնակավայրում թունավոր արտանետումներ ունեցող ձեռնարկությունները տեղաբաշխելիս.**

- 1) էլեկտրատրանսպորտի քանակը
- 2) անթափոն արտադրությունների առկայությունը
- 3) բնակավայրի տարեկան միջին ջերմաստիճանը
- 4) քամիների վարդը

40

**Ո՞ր պատասխանն է ճիշտ.**

*Որոշակի կլիմայական պայմաններում, միայն տարվա տաք եղանակներին արեգակնային ճառագայթների ազդեցությամբ մթնոլորտում առաջնային աղտոտող նյութերը քայքայվում են և առաջանում են նոր նյութեր: Այդ երևույթը կոչվում է.*

- 1) ջերմոցային էֆեկտ
- 2) ջերմային աղտոտում
- 3) թթվային անձրև
- 4) լուսաքիմիական սմոգ

41

**Գրել այն ջրէկների համարները, որոնք չեն մտնում Հրազդանի կասկադի մեջ.**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Տաթևի    | 5) Այրումի |
| 2) Երևանի   | 6) Սևանի   |
| 3) Արգելի   | 7) Արգնիի  |
| 4) Քանաքեռի | 8) Շամբի   |

42

**Գրել այն սառը ծովային հոսանքների համարները, որոնք պատկանում են Խաղաղ օվկիանոսին.**

- |                  |                |
|------------------|----------------|
| 1) Կանարյան      | 5) Սոմալիական  |
| 2) Ֆոլկլենդյան   | 6) Պերուական   |
| 3) Բենգելյան     | 7) Լաբրադորյան |
| 4) Կալիֆոռնիական | 8) Օյասիո      |

43

**Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական պայթյունը».**

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Ռուսաստան | 5) Քենիա    |
| 2) Պակիստան  | 6) Լեհաստան |
| 3) ԱՄՆ       | 7) Գերմանիա |
| 4) Ճապոնիա   | 8) Իտալիա   |

44

**Տրված պետությունները դասավորել ուրբանիզացիայի մակարդակի աճման կարգով.**

- 1) Հնդկաստան
- 2) Բուրնան
- 3) Մեծ Բրիտանիա
- 4) Ռուսաստան

45

**Աշխարհի վառելիքաէներգետիկ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ**

- 1) Էլեկտրաէներգետիկայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ջրաէլեկտրակայանները:
- 2) Ատոմային էներգետիկան զարգացած է տնտեսապես զարգացած երկրներում, որոնք վառելիքով ու ջրաէներգետիկ ռեսուրսներով համեմատաբար աղքատ են:
- 3) Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը համալիր ճյուղ է՝ բաղկացած վառելիքային արդյունաբերությունից և էլեկտրաէներգետիկայից:
- 4) Վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման հաջորդական երեք փուլերն են ածխայինը, միջուկայինը և նավթագազայինը:
- 5) Նավթի հանույթի ծավալով առաջատար երկրներն են Ճապոնիան, Գերմանիան և Ֆրանսիան:
- 6) Աշխարհի արդյունաբերությունն աշխարհի վառելիքային արդյունաբերության ամենաարագ զարգացող ենթաճյուղն է:

## Բ մակարդակ

46

Քաղաքն արևելյան երկայնության  $20^\circ$ -ի վրա է: Ո՞ր ժամային գոտում է այն.

- 1) 4-րդ
- 2) 0-ական
- 3) 2-րդ
- 4) 1-ին

47

Լեռը օվկիանոսի ափին է՝  $45^\circ$  գուգահեռականի վրա:  $0^\circ$  ջերմաստիճանի դեպքում մթնոլորտային ճնշումը նրա գագաթին հավասար է 450 մմ ս. ս.: Լեռան բացարձակ բարձրությունը կլինի.

- 1) 3100 մ
- 2) 4500 մ
- 3) 1345 մ
- 4) 2495 մ

48

Ո՞ր շարքի ջրավազանները նույն օվկիանոսի մասեր չեն.

- 1) Հյուսիսային ծով, Բիսկայան ծոց, Բալթիկ ծով
- 2) Օխոտի ծով, Դեղին ծով, Բենգալական ծոց
- 3) Կարմիր ծով, Պարսից ծոց, Արաբական ծով
- 4) Բարենցի ծով, Լապտոնների ծով, Արևելասիբիրական ծով

49

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Անտիցիկլոններին բնորոշ են տեղատարափ անձրևները:
- 2) Հասարակածային կլիմայական գոտում է այն վայրը, որտեղ գրանցվել է Երկրագնդի վրա տեղումների առավելագույն քանակը:
- 3) Օվկիանոսային տաք հոսանքները խոչընդոտում են տեղումների առաջացմանը:
- 4) Ծովային կլիմա ունեցող շրջաններում տեղումները տարվա ընթացքում բաշխվում են հավասարաչափ:

50

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Եվրասիայում անապատների բնական զոնան ձևավորվում է արևադարձային, մերձարևադարձային և բարեխառն կլիմայական գոտիներում:
- 2) Հարավային Ամերիկայի մերձարևադարձային կլիմայական գոտում տարածվում է տայգայի բնական զոնան:
- 3) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
- 4) Ավստրալիայում բացակայում է հասարակածային կլիմայական գոտին:

51 Նախագահական հանրապետություններ են.

- 1) Բրազիլիան և ԱՄՆ-ը
- 2) Հնդկաստանը և Գերմանիան
- 3) Ճապոնիան և Իտալիան
- 4) Թուրքիան և Իսպանիան

52 «Ժողովուրդ — կրոն» գույգերից ընտրել սխալը.

- 1) ճապոնացիներ — կոնֆուցիականություն
- 2) իսպանացիներ — քրիստոնեություն
- 3) մոնղոլներ — բուդդայականություն
- 4) պարսիկներ — մահմեդականություն

53 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թեյի համաշխարհային բերքի 3/5-ը ապահովում են Եվրոպայի երկրները:
- 2) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 3) Վուշը բարեխառն գոտու սակավ ջերմասեր մշակաբույս է:
- 4) Ջուտն ու սիսալը հացահատիկային մշակաբույսեր են:

54 Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Նավահանգստային քաղաքներում լայն զարգացում է ստացել նավթավերամշակող արդյունաբերությունը:
- 2) Հյուսիսային շրջանն իր զարգացման մակարդակով էականորեն զիջում է հարավային շրջանին:
- 3) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 4) Բրնձի մշակությամբ աշխարհի առաջատար երկրներից է:

55 Բնութագրումով որոշել տարածաշրջանը.

*Եվրոպա աշխարհամասի այս տարածաշրջանը հարուստ է անտառային և ջրային ռեսուրսներով: Տարածաշրջանի երկրները բնութագրվում են բնակչության ցածր բնական աճով, իսկ կյանքի միջին տևողությամբ աշխարհի առաջատարներից են: Հավատացյալ բնակչության հիմնական մասը քրիստոնյա բողոքականներ են: Ո՞րն է այդ տարածաշրջանը.*

- 1) Արևմտյան Եվրոպան
- 2) Հյուսիսային Եվրոպան
- 3) Հարավային Եվրոպան
- 4) Արևելյան Եվրոպան

56

«Լեռնաշղթա — լեռնագագաթ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Միափորի — Լավվար
- 2) Սևանի — Քաշաթաղ
- 3) Ուրծ — Արմաղան
- 4) Բարգուշատ — Մեծ Եղնախաղ

57

ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարվա ընթացքում տեղումների նվազագույն քանակը թափվում է գարնան ամիսներին:
- 2) Տարվա ցուրտ ժամանակահատվածում միջլեռնային գոգավորություններում դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 3) Հանրապետության տարածքը Բարեխառն կլիմայական գոտում է:
- 4) ՀՀ տարածքում ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Արագածի լանջին՝ Քարի լճի շրջանում:

58

Ընտրել «օգտակար հանածո — հանքավայր» համապատասխանության ճիշտ շարքը.

- |                  |            |
|------------------|------------|
| 1) պղնձահրաքար   | ա. Սվարանց |
| 2) պղնձամոլիբդեն | բ. Սոթք    |
| 3) ոսկի          | գ. Կապան   |
| 4) երկաթաքար     | դ. Ագարակ  |

- 1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

59

Ի՞նչն ընդհանուր չէ Սյունիքի և Լոռու մարզերի համար.

- 1) Տարածված են լեռնաանտառային լանդշաֆտները:
- 2) Սահմանակից են Ադրբեջանի Հանրապետությանը:
- 3) Արդյունաբերության մասնագիտացման ճյուղերից է գունավոր մետաղա-ձուլությունը:
- 4) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:

60

Տավուշի մարզի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են.

- 1) կերաբույսերի մշակությունը և շերամապահությունը
- 2) կարտոֆիլի մշակությունը և թռչնաբուծությունը
- 3) հացահատիկի մշակությունը և ոչխարաբուծությունը
- 4) պտղաբուծությունը և խոզաբուծությունը

61

**Տրված պետությունները դասավորել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի նվազման կարգով.**

- 1) Չինաստան
- 2) Հնդկաստան
- 3) Բրազիլիա
- 4) Արգենտինա

62

**Գրել ՀՀ ցեմենտի արտադրության կենտրոնների համարները.**

- |               |            |
|---------------|------------|
| 1) Արտաշատ    | 5) Գյումրի |
| 2) Երևան      | 6) Հրազդան |
| 3) Արարատ     | 7) Արթիկ   |
| 4) Վաղարշապատ | 8) Գորիս   |

63

**Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.**

- |               |                |
|---------------|----------------|
| 1) սլավոնական | 5) քարթվելական |
| 2) ռոմանական  | 6) իրանական    |
| 3) գերմանական | 7) հնդարիական  |
| 4) թյուրքական | 8) հայկական    |

64

**Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

- |              |                |
|--------------|----------------|
| 1) Կուրո Սիո | 5) Այասկայի    |
| 2) Գվինեական | 6) Բրազիլական  |
| 3) Մոզամբիկի | 7) Գվիանական   |
| 4) Գոլֆստրիմ | 8) Մուսսոնային |

65

**Երկու քաղաքներ հասարակածի վրա են, որոնցից մեկն արլ. երկ. 90°-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 50°-ի: Որոշել դրանց միջև ամենակարճ հեռավորությունը կիլոմետրերով:**



(66-67) Երկրի բնակչության թիվը 1,5 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ.

66 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67 Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):

(68-69) Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 6 մ<sup>2</sup> է, գետի ջրի արագությունը՝ 3 մ/վ.

68 Որոշել գետի ծախսը:

69 Որոշել գետի հոսքը 1 ժամում:

**ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Փամբակի և Ծաղկունյաց լեռները արտաքին շարի լեռներ են:
- 2) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:
- 3) Սևանա լիճը արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
- 4) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթան:
- 5) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:
- 6) Արփայի գոգավորությունը Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է: